ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հունիսի 2021 թվականի թիվ 186 - Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

որոշում եմ.

1. ՀՀ Տավուշի մարզի համայնքներում առկա հիմնախնդիրների վերհանման նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

Նարեկ Ղուշչյան – խմբի ղեկավար, ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ,

անդամներ՝

Աղաբեկ Գալստյան – ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ,

Արծրուն Նազարյան – Հողաշինության և հողօգտագործման բաժնի վարիչ,

Արտակ Սարգսյան – Քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ,

Մերուժան Հարությունյան - Կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ,

Գուրգեն Հարությունյան - Զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի վարիչ,

Տիգրան Սաքանյան – մարզպետի տեղակալի օգնական:

2. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ համայնքներ այցելության նպատակով կազմել ժամանակացույց:

3. Աշխատանքային խմբին՝ ըստ ժամանակացույցի մեկ ամսվա ընթացքում այցելել համայնքներ, վեր հանել բոլոր հիմնախնդիրներն ըստ ոլորտների և այցելությունների

ավարտից հետո ամփոփ տեղեկատվությունը հինգ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ՀՀ Տավուշի մարզպետի քննարկմանը:

4. Աշխատանքային խմբի կողմից իրականացվող աշխատանքների պատասխանատու նշանակել մարզպետի տեղակալ՝ Նարեկ Ղուշչյանին:

5. ՀՀ Տավուշի մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ Վալեր Օրդյանին՝ աշխատանքները լուսաբանել մարզպետարանի պաշտոնական կայքի և ֆեյսբուքյան էջի միջոցով:

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

29.06.2021

X

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

28 հունիսի 2021թ.
ք. Իջևան